ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ԹԻՎ 21 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ.ԱՐԹԵՆՅԱՆ/

22. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ.ԱՐԹԵՆՅԱՆ/

23. ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ԱՎԱԳՅԱՆ/

Աշխատակազմի քարտուղար Արևիկ Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2021թ.

Թիվ 21

## ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ ( ) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| Ազիզյան Մնակ | | | |
| Արթենյան Արամ | | | |
| Արթենյան Արտյոմ | | | |
| Հակոբյան Արտաշ | | | |
| Հարությունյան Բելա | | | |
| Հովհաննիսյան Ալիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ*

---

*22 հոկտեմբերի 2021թ.* *Թիվ 22*

## *ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի պահանջներով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Պտղունք համայնքի հողամասի սեփականատեր Մարիամ Ասատուրի Եղոյանի հայտը և Պտղունք համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Համաձայնություն տալ Պտղունք համայնքի հողամասի սեփականատեր Մարիամ Ասատուրի Եղոյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական № 20032017-04-0032 տրված 20.03.2017թ., ՀՀ Արմավիրի մարզի Պտղունք համայնքում 04-082-0002-0001 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության «վարելահող» 0.2 հա մակերեսով հողամասից 0,0689 հա մակերեսով հողամասը փոխարինել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասերի անասնագոմ կառուցելու նպատակով:
2. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո

ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում՝ համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

| | ԿՈՂՄ ( ) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| Ազիզյան Մնակ | | | |
| Արթենյան Արամ | | | |
| Արթենյան Արտյոմ | | | |
| Հակոբյան Արտաշ | | | |
| Հարությունյան Բելա | | | |
| Հովհաննիսյան Ալիկ | | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2021թ. Թիվ 23

## ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Պտղունք համայնքի ղեկավար Կարապետ Արթենյանին խրախուսել և տալ պարգևատրում՝ 290000(երկու հարյուր իննսուն հազար ) դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ ( ) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| Ազիզյան Սևակ | | ------------ | ------------ |
| Արթենյան Արամ | ------------ | ------------ | ------------ |
| Արթենյան Արտյոմ | | ------------ | ------------ |
| Հակոբյան Արտաշ | | ------------ | ------------ |
| Հարությունյան Բելա | | ------------ | ------------ |
| Հովհաննիսյան Ալիկ | | ------------ | ------------ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ